

(Եբրայեցերէն Եգրայեղ, Գ. Թագաւորաց, ԺԸ. 45) վրայ նայող Նազարէթի լեռներուն ծայրը կայ տեղ մը որ կը կոչուի Գահալիժուսն Քրիստոսի, որուն համար կ'ըսէ Ղուկաս. «Աձին զնա առ արտեան լերինն, որոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր»: Հետեւեալ կերպով կը պատմէ աւանդութիւնը. երբ Հրեաները բռնեցին Յիսուսը գահալիժելու համար, քարաժայռը քացուեցաւ և ծածկեց զԱնիկա պահելու համար, ուրուն ի նշան հոն թողուց իր մարմնոյն պատկերը, եւ այնքան կատարելապէս որ մինչև իսկ հանդերձներուն նշանները կը տեսնուին. մինչ Տէրը անոնց ձեռքէն ազատելով լեռնէն կ'իջնէր և քարաժայռին ներքեւը ծածկուիլ կ'ուզէր, իսկոյն անոր զգեստներուն հպումէն քարը տեղի տուաւ և տէրունական մարմինը ընդունեց, այնպէս որ նոյն քարաժայռին վրայ կը տեսնուին անոր մարմնոյն կերպարանքը, կազմուածը եւ զգեստներուն գոյնը և անոնց հետքերը. այս պարագան կը յիշեն հին ուղեգիր ուխտաւորները: Այս նշանները այժմ գոյութիւն չունին. գուցէ Արաբները ջնջած են և կամ անխոհեմ քրիստոնեաներ վրասած և կամ ծածկած են որպէսզի բոլորովին չանհետանան: Այս տեղւոյն վրայ ալ շինուած էր վանք մը և մատուռ մը (Մար. Ա. հատ. էջ 504-506, E. T. P. էջ 185):

2. Թաբոր լեռան աւանդութիւնը. — Հրեաներու մէջ կար Թաբոր լեռան նկատմամբ հետեւեալ աւանդութիւնը. Թաբոր ընդգէմ Հերմոնի կ'ըսէ. «Իմ սարերուն վրայ Աստուած կը բնակէր, ինծի կը վերաբերի լիակատար իրաւունքը. երբ ի սկզբան՝ Նոյի օրերուն, ջրհեղեղը կը ծածկէր բոլոր լեռները, անոր